

**ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ**

**«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում
փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային
կոդ՝ Կ-1144-29.08.2025-ՖՎ-011/0) վերաբերյալ**

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1144-29.08.2025-ՖՎ-011/0) (այսուհետ՝ Նախագիծ) մասնագիտական փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչությունում:

Նախագիծը ենթարկվել է իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության:

Ստորև ներկայացվում է մասնագիտական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

Իրավական փորձաքննության արդյունքները

Նախագծի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից նշենք հետևյալը.

Առաջարկում ենք շտկել Նախագծում առկա վրիպակները, մասնավորապես՝ Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 15-րդ հոդվածում լրացվող նոր՝ 12.1-ին և 12.2-րդ մասերի համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջին, այն է՝ մասի համարը տեքստից անջատել միջակետով, բացի այդ՝ անհրաժեշտ է քննարկվող հոդվածում նշված «12.1-րդ» ձևակերպումը փոխարինել «12.1-ին» ձևակերպմամբ՝ հռոմեական թվականների ճիշտ գրելաձևն ապահովելու նպատակով:

Նույն դիտարկումը վերաբերելի է նաև Նախագծի ողջ տեքստում առկա «15.1-րդ» ձևակերպումներին:

Միաժամանակ՝ Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 15.1-ին հոդվածում փոփոխություն և լրացումներ կատարելու կապակցությամբ հարկ է նշել, որ սույն թվականի հունիսի 25-ից շրջանառության մեջ է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1108-25.06.2025-ՖՎ-011/0), որի 1-ին հոդվածով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 15.1-ին հոդվածը նոր խմբագրությամբ է շարադրվում և Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներով կատարվող փոփոխությունները համատեղելի չեն նոր խմբագրությամբ շարադրված դրույթի հետ:

Եզրահանգում

Ամփոփելով փորձաքննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ Նախագծով սահմանված կարգավորումներում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող նորմեր առկա չեն:

Միաժամանակ առաջարկում ենք ներկայացված դիտարկման հիման վրա ապահովել Նախագծով սահմանված կարգավորումների համապատասխանությունը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջին:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Կատարող՝ Ա. Ղազարյան (հեռ.՝ 011-513-248)

19.09.2025թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

**Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման
անհրաժեշտության բացակայության մասին**

Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման
անհրաժեշտությունը բացակայում է:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Կատարող՝ Ա. Ղազարյան (հեռ.՝ 011-513-248)

19.09.2025թ.

Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության արդյունքները

Նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) առաջարկվում է սահմանել պայմանական
պարտավորություններ առաջացնող պայմանագրերը և դրանցում կատարվող
փոփոխությունները լիազորված մարմնի կողմից նախնական գնահատման պահանջ,
միջնաժամկետ ծախսերի ծրագրի հարկաբյուջետային քաղաքականությունը և
Կառավարության բյուջետային ուղերձը շարադրող դրույթներում հարկաբյուջետային
հատուկ ռիսկերին առնչվող տեղեկատվությունների ներկայացման մասին դրույթ,
հարկաբյուջետային հատուկ ռիսկերի գնահատման նպատակով պետական մարմինների

կողմից տեղեկատվության հավաքագրման ընթացակարգ, պետական բյուջեի և համայնքների բյուջեների եկամուտների աղբյուրները սահմանող հոդվածներում ներառել «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքով սահմանված պայմանագրերի շրջանակներում մասնավոր գործընկերոջ կողմից հանրային գործընկերոջը վճարվող փոխհատուցումները, տույժերն ու տուգանքները և այլ վճարները:

Նախագիծը ֆինանսատնտեսագիտական հիմնախնդիրներ չի պարունակում:

Նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

Եզրահանգում

Նախագիծը ֆինանսատնտեսագիտական հիմնախնդիրների տեսանկյունից լրամշակման կարիք չունի:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

ԱՐԹՈՒՐ ԹԱՍԱԶՅԱՆ

կատարող՝ գլխավոր մասնագետ Գ. Կիրակոսյան
(հեռ.՝ 011 513-603)

03.09.2025թ.

Սոցիալական փորձաքննության արդյունքները

ՀՀ կառավարության կողմից ներկայացված նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) առաջարկվում է փոփոխություններ և լրացումներ կատարել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում (այսուհետ՝ Օրենք), ինչը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության օրենսդրական դաշտում հարկաբյուջետային հատուկ ռիսկերի բացահայտման, նյութականացման,

տեղեկատվության ներկայացման և հրապարակման մասին կարգավորող դրույթների սահմանման անհրաժեշտությամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բացակայում է ռիսկերի վերլուծության համար իրավական պահանջը, 2021 թվականից սկսած հարկաբյուջետային հատուկ ռիսկերի մասին որոշ տեղեկատվություններ ընդգրկվել են տարեկան բյուջեի ուղերձում և միջնաժամկետ ծախսերի ծրագրերում (ՄԺԾԾ): Մասնավորապես, յուրաքանչյուր տարի վերլուծվում և ներկայացվում են պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) պայմանագրերից, պետական մասնակցությամբ ընկերություններից, բյուջետային վարկերից և երաշխիքներից բխող հարկաբյուջետային ռիսկերի մասին մանրամասն տեղեկատվություններ: ՊՄԳ պայմանագրերը կարող են զգալի հարկաբյուջետային ռիսկեր պարունակել (օրինակ՝ ֆինանսական պարտավորություններ), որոնք կարող են ամբողջությամբ չհաշվառվել բյուջետավորման գործընթացներում:

Պետական մասնակցությամբ ընկերությունների ֆինանսական կայունությունը և պատշաճ գործունեությունը կարող է հարկաբյուջետային ռիսկեր առաջացնել հանրային միջոցների արդյունավետ կառավարման տեսանկյունից, հատկապես, եթե այդ ընկերություններին ուղղվում են զգալի սուբսիդիաներ, վարկեր, կապիտալի ներարկումներ կամ օժանդակություն՝ ֆինանսական անկայունության ժամանակ:

Ներկայացված Նախագծով, հեղինակն առաջարկում է Օրենքում սահմանել՝

- որ պարտավորություններ առաջացնող պայմանագրերը և դրանցում կատարվող փոփոխությունները ենթակա են նախնական գնահատման լիազորված մարմնի կողմից, ինչպես նաև հստակեցնել, որ պայմանական պարտավորություններ առաջացնող պայմանագրերը և դրանցում կատարվող փոփոխությունները նույնպես ենթակա են պարտադիր գրանցման պետական լիազորված մարմնում:

- ՄԺԾԾ հարկաբյուջետային քաղաքականությունը և Կառավարության բյուջետային ուղերձը շարադրող դրույթներում ավելացնել հարկաբյուջետային հատուկ ռիսկերին առնչվող տեղեկատվությունները:

- Օրենքում ավելացնել հարկաբյուջետային հատուկ ռիսկերի գնահատման նպատակով պետական մարմինների կողմից տեղեկատվության հավաքագրման ընթացակարգը սահմանող դրույթ:

Նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

Եզրահանգում

Նախագծի ընդունման արդյունքում, հեղինակն ակնկալում է, որ իրավական հիմք կստեղծվի հարկաբյուջետային հատուկ ռիսկերի և դրանց վերաբերյալ տեղեկատվության ներկայացման իրավական պահանջների առումով:

Նախագծով առաջարկվող փոփոխությունների և լրացումների ընդունումը սոցիալական հիմնախնդիրների տեսանկյունից կունենա չեզոք ազդեցություն:

Նախագիծը սոցիալ, կրթական, առողջապահական հիմնախնդիրների տեսանկյունից լրամշակման կարիք չունի:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՍՈՑԻԱԼ, ԿՐԹԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

Լ. Մարկոսյան

Կատարող՝ Ա. Գալստյան (հեռ. 011-513-235), (12-35)

05.09.2025թ.